Հաստատում եմ
Տնօրեն

Ջիլ գյուղի միջնակարգ դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 8-րդ դասարանի դասղեկի աշխատանքային պլան

Դասարանի կազմը

h/h	Ազգանուն անուն ,հայրանուն	Ծննդյան օր,ամիս,տարի
1.	Աբրահամյան Իրինա Գրիգորի	03.05.2010թ.
2.	Ավետյան Արտուշ Արթուրի	06.01.2010թ.
3.	Ավետյան Պողոս Լևոնի	14.04.2010թ.
4.	Բաղյան Իրինա Արմենի	06.04.2010թ.
5.	Գաբրիելյան Ելենա Մարտիրոսի	14.10.2010թ.
6.	Գաբրիելյան Ռոման Գանձակի	13.05.2010թ.
7.	Ծառուկյան Սվետլանա Էռնեստի	12.02.2010թ.
8.	Հովհաննիսյան Ոսկի Համլետի	23.01.2010թ.
9.	Հովհաննիսյան Սերգեյ Արթուրի	02.11.2010թ.
10.	Սահակյան Մարուսյա Միքայելի	02.05.2010թ.

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նախատեսում ենք ուսումնադաստիարակչական մի շարք հարցեր՝ հետևել ուսուցման գործընթացին, պարբերաբար դասալսումներ կազմակերպել, տարբեր զրույցներ ունենալ աշակերտների հետ,կազմակերրպել արտադասարանական էքսկուրսիաներ՝թանգարան, թատրոն....

Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանում սովորում են 10 աշակերտ՝ 6 աղջիկ, 4 տղա, որոնք ունեն ընդհանուր առմամբ լավ ընդունակություններ: Երեխաները համախմբված են և ընկերասեր: Աշակերտները դպրոց են գալիս ժամանակին,աշակերտական հագնված: Աշակերտները ակտիվ են, գործունյա և նախաձեռնող:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքի և ուսման առաջադիմությանը,կազմակերպել ակտիվ դասալսումներ,պահել դպրոց-ուսուցիչ փոխադարձ կապ:

Հայեցի դաստիարակություն

Սովորողների հայեցի դաստիարակությունը բոլոր ժամանակներում էլ կենսական նշանակություն են ունեցել: Գրեթե բոլոր դարաշրջաններում էլ, բոլոր ժողովուրդների մշակութային ստեղծագործություններն ունեցել են ազգապահպան նշանակություն: Մեսրոպ Մաշտոցն ու Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթն ու Անանիա Շիրակացին, Խաչատուր Աբովյանն ու Հովհաննես Թումանյանը, Եղիշե Չարենցն ու Մարտիրոս Սարյանն իրենց աշխատություններով ծառայել են ազգին, ժողովրդին, որովհետև նրանց ստեղծագործություններն ազգապահպան նշանակություն են ունեցել և այսօր էլ հայապահպան նշանակություն են ունեցել:

Հոգևոր դաստիարակությունը

Հոգևոր դաստիարակությունն ունի բարոյական և քրիստոնեական արժեքներ սերմանելու և մշակութային ժառանգությունը փոխանցելու նպատակ: Այն մեզ հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող ուժ է:

Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է աշակերտի արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու տեսանկյունից.

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է:

Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և բավարարում է գեղագիտական պահանջմունքները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները:

Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրությունը:

Որպես արժեք այն բազմաբովանդակ է: Հասկանալով հայրենասիրության էությունն ու բնույթը, ըստ այդմ, կկարողանանք մեկնաբանել ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Բնականաբար, տրամաբանական կլինի գիտականորեն հիմնավորված ձևերի ու միջոցների ընտրությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Համագործակցելով ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ, համագործակցել, որ ուսումնական գործընթացը համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

Ուշադրություն դարձնել աշակերտների մեջ աշխատանքային ընդունակությունների ձևավորմանը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Էքսկուրսիաների,զբոսանքների միջոցով աշակերտների մեջ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

1. Կազմակերպչական հարցեր. ավագի ընտրություն, հերթապահության սահմանում
2. Զրույց նվիրված Հայաստանի անկախությանը
3. Հանդուրժողականության սահմանում: Անհանդուրժողական դրսևորումները:
4. Զրույց աշակերտների իրավունքների և պարտականությունների, համակցության կանոնների մասին:
5. Բանավեճ «Ինչպես եմ տեսնում իմ ապագան» թեմայով:
6. Բանավեճ-քննարկում «Կամք, բնավորություն, ճակատագիր» թեմայով:
7. Զրույց «Վարվելաձևի կանոնները» թեմայով:
8. Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը:
9. Կազմակերպչական հարցեր:
10. Զրույց «Մարդասիրական դասեր» թեմայով:
11. Ազնիվ և անկեղծ հարաբերությունները մեր դասարանում:

12. Զրույց «Իմ ժամանակի հերոսը» թեմայով:
13. Առաջադիմության քննարկում:
14. Ամանորի նախապատրաստում:
15. Առաջին կիսամյակի ամփոփում:
16. Զրույց «Իմ ընկերները խորագրով»:
17. Հայկական բանակին նվիրված զրույց:
18. Այցելել եկեղեցի: Լսել պատարագ և մոմ վառել:
19. Զրույց «Գիրքն իմ լավագույն ընկերն է» թեմայով:
20. Մեզ շրջապատող աշխարհը:
21. Քաղաքավարության կանոնները և դրանց կիրառումը:
22. Հաճախումների և առաջադիմությանը նվիրված հարցերի քննարկում:
23. Պոեզիայի ժամ «Մոր կերպարը» բանաստեղծությունը:
24. Ազգային ծեսերը և տոնակատարությունները:
25. Վատ սովորությունների հետևանքները:
26. Խաղ-մրցույթի անցկացում;
27. «Հայոց ցեղասպանությունը և ներկայիս աշխարհաքաղաքական իրավիճակը» թեմայով զրույց:
28. Զրույց «Իմ երազած մասնագիտությունը» թեմայով:
29. Զրույց «Խոսքի կուլտուրա» թեմայով:
30. Զրույց «Իմ պարտականություններն ու իրավունքները» թեմայով:
31.Զրույց «Պատերազմը մեր կյանքում» թեմայով:
32. Տեսադաս «Տարերային աղետներ»:
33. Կիսամյակային առաջադիմության քննարկում:
34. Վերջին դաս: